ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«21» «Դեկտեմբեր» 2021 թ. № 179-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N171-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հունիսի 9-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N171-Ա հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածը լրացնել հետևյալ պարբերություններով.
«Ազատ Գրիգորյան - «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի քաղցրահամ և հանքային ջրերի մոնիթորինգի բաժնի առաջատար մասնագետ,
Արթուր Հայրապետյան - «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հիդրոերկրաբանական հետազոտությունների բաժնի առաջատար մասնագետ»,

2) «Վարդան Միրզախանյան - Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)» պարբերությունը փոխարինել «Գոռ Միքայելյան- Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ (համաձայնությամբ)» պարբերությամբ,

3) «Աշոտ Գևորգյան - Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչության ջրերի և մթնոլորտի վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ (համաձայնությամբ)» պարբերությունը փոխարինել «Վահե Սարգսյան- Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչության ջրերի և մթնոլորտի վերահսկողության բաժնի պետական տեսուչ (համաձայնությամբ)» պարբերությամբ,

4) 4-րդ պարբերության «ՊՈԱԿ-ի ազգային ցանցի հյուսիսային մասնաճյուղի պետ» բառերը փոխարինել «ՊՈԱԿ-ի ստորերկրյա ջրերի մոնիթորինգի ծառայության պետ» բառերով,
5) 5-րդ պարբերության «քաղցրահամ» բառից հետո լրացնել «և հանքային» բառերը:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

5/21/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«21» մայիսի 2021թ
ք. Երևան